ՀԱՅ-ԱՂՈՒԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ ՀԻՍԻՍ-ԱՐԵՒԵԼԵԱՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՒ ՀՈՆԱՑ ԴԱՐՁԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԱՐՍԷՆ ՇԱՀԻՆԵԱՆ
a.shaginyan@spbu.ru

ՄՈՒՏՔ

Վաղ միջնադարում հայ-աղուանական քաղաքական ու կրօնական համատեղ առաքելութեամբ խազարներին հպատակ հիւսիսկովկասեան հոները կրօնափոխւում են:

Ուսումնասիրութիւնը կը ճշդի պաշտօնական այդ դարձի ժամանակագրութիւնը:

Մօտ 631ին Բիւզանդական Հայքի տարածքներից ձեւաւորուեց հայոց ինքնավար իշխանութիւնը, որի սահմանները միքանի տարի անց ընդլայնուեցին Մեծ Հայքի մարզպանական, այսինքն՝ պարսկական հատուածի հաշուին: 652ի Օգոստոսին հայոց գահերէց իշխան Թէոդորոս Ռշտունին (639/40-659) համաձայնագիր կնքեց Մերձաւոր Արեւելքի նոր ախոյեանի՝ Արաբական Խալիֆայութեան, որը արդէն քաղաքական քարտէզի երեսից ջնջել էր Սասանեան Իրանը եւ բռնազաւթել Բիւզանդիայի բոլոր արեւելեան գաւառները: Արդիւնքում հայոց իշխանութիւնը - Դուին մայրաքաղաքով - ստացաւ անվտանգութեան երաշխիքներ եւ պետական ինքնիշխանութեան ճանաչում: Փոխարէնը՝ Թէոդորոսը ընդունեց արաբ փոխարքայ Մու՛աուիյայի (640-661) գերիշխանութիւնը, պարտաւորուելով երեք տարուց յետոյ սկսել ամէնամեայ հարկ մուծել նրան, նրանից էլ ստանալ իր իշխանութեան տարբերանշանները: Այդ իսկ պատճառով, 653ին Թէոդորոսը շտապեց Դամասկոս եւ իր նոր գերիշխանից ստացաւ աւելին՝ յարակից հարաւկովկասեան երկրների՝ Աղուանքի եւ Վիրքի, հանդէպ կառավարման իրաւունքներ[1]:

Արաբական Խալիֆայութեան գերիշխանութեան ձեւական ճանաչումը շարունակուեց մինչեւ 680ի մահը Մու՛աուիյայի՝ ով 661ին բռնատիրել էր խալիֆայի գահին: Նրան յաջորդող Եազիդ

Ա.ի (680-683) օրոք *«...եղեւ շփոյթումն Տաճկաց սաստիկ պատերազմաւ: Եւ դադարեցին ի հարկատրութենէ նոցա Հայք, Վիրք եւ Աղուանք՝ ծառայեալ նոցա ամս Լ»*[2]: Այս տողերը պատկանում են *685 Թուականի Ժամանակագրութիւն*ի հեղինակի գրչին, ենթադրաբար՝ հայ վարդապետ Փիլոն Տիրակացուն: Մէկ դար անց մէկ այլ հայ վարդապետ՝ Ղեւոնդը, դրանց կ'աւելացնի՝ *«Եւ եղեն աւուրք ապստամբութեան նոցա ամք Գ»*[3]:

Մինչեւ օրս այդ *«ապստամբութեան»* սկիզբ էր ընդունում Մու'ավիայի մահուան տարին[4]: Սակայն հարկաւոր է թուագրել այն 681ի Օգոստոսից մինչեւ 682ի Օգոստոսը ընկած ժամանակահատուածով՝ Լ. տարիների ծառայութեան սկիզբն ընդունելով հայ-արաբական դաշնագրի կնքումը, 652ի Օգոստոսը: *Ժամանակագրութիւն*ից մէջբերուած հատուածը համապատասխանում է ե՛ւ յաջորդ ժամանակագրութեանը, ե՛ւ արաբագիր պատմիչ Ալ-Բալաձուրիի (մահ. 892) մօտ պահպանուած աւանդութեանը: Այնտեղ ուղիղ նշւում է, թէ ինչպէս Արմինիյան, Իբն Ազ-Զուբայրի (682-692) օրոք բռնկուած քաղաքացիական կռիւներից օգտուելով, անմիջապէս անջատուեց Խալիֆայութիւնից՝ խախտելով կնքուած համաձայնագիրը[5]: Աւելին, մէկ այլ արաբ մատենագրի՝ Ալ-Եա'կուբիի (մահ. 897) մօտ, պահպանուել է Խալիֆայութեան –կարծում ենք հենց այս ժամանակահատուածին վերաբերող -հարկային մատեանը[6]: Այնտեղ թուագրուած են Սասանեանների նախկին բոլոր մարզպանութիւնները, բացի այն երեքից, որոնք միասին արաբները կոչում էին Արմինիյայի Ուիլայաթ (նահանգ), եւ որոնք Մու'ավիա Ա.ի օրոք արքունի հարկերը կանոնաւոր փոխանցում էին Դամասկոս, իսկ Եազիդ Ա.ի օրոք այդ անելուց հրաժարուեցին:

Օգտուելով իրավիճակից, երբ արաբական իշխանութիւնները անզօր էին ապահովել Կովկասից հարաւ գտնուող քրիստոնեայ պետական կազմաւորումների արտաքին անվտանգութիւնը՝ Դարբանդի դռներով եւ Կովկասեան Լեռնաշղթան յաղթահարելով Աղուանք ներխուժեցին թիւրքախօս հոներն ու խազարները:

Առաջին անգամ 630ից յետոյ, երբ Արեւմտա-Թիւրքական Խաքանութեան արեւելաեւրոպական ու հիւսիսկովկասեան տիրոյթներում ձեւաւորուել էր Խազարական անկախ Խաքանութիւնը, այս քոչուոր ցեղերը Հարաւային Կովկաս էին ներխուժել դեռ 661ին:

*Աշխարհացոյց*ի, հիմնականում Անանիա Շիրացուն (մօտ 612-685) վերագրուող ընդարձակ խմբագրութեան, *«Ասիական Սկիւթիա»* յօդուածում հոների մասին հետեւեալն է գրուած. *«Իսկ ի հիւսիսոյ նորա՝* (այսինքն՝ Դարբանդի - Ա.Շ.) *թագաւորութիւն* (աւելի ճիշտ՝ Մեծ Իշխանութիւն - Ա.Շ.) *Հոնաց հուպ ի* (Կասբից - Ա.Շ.) *ծով. եւ ի մտից նորա առ Կաւկասով Վարաջան*[7] *քաղաք նոցին Հոնաց...»*: Յաջորդ հատուածում սոյն յօդուածի տեղեկութիւնները ուղղակիօրէն վկայում են, որ հոնաց թագաւորը (մեծ իշխանը) ճանաչում էր խազարական խաքանի գերիշխանութիւնը[8]:

Աղուանից իշխան Ջեւանշէրի (636/7-681) գահակալման 28րդ տարում, երբ *«լինէր ձմեռնային եղանակի հասարակաւորութիւն»*, այսինքն՝ 664ի Դեկտեմբերի 21ին կամ 22ին, Աղուանից Աշխարհ ներխուժեցին հոները, եւ այս անգամ՝ առանց խազարների: Ճշգրիտ այս օրը մենք յայտնաբերում ենք անանուն հեղինակի մօտ, ում երկը *684 Թուականի Պատմութիւն* պայմանական խորագրով տեղ է գտել *Պատմութիւն Աղուանից Աշխարհի* եռահատոր գրքում, որն իր հերթին պատկանում է Ժ. դարի պատմիչ Մովսէս Դասխուրանցու գրչին[9]:

Հոների արշաւանքը պարտադրեց Ջեւանշէրին՝ բանակցութիւնների նստել նրանց հետ: Սակայն, ինչպէս հաւաստիացնում է անանուն հեղինակը, տուեալ նախաձեռնութեամբ հանդէս եկաւ հոնաց արքան (մեծ իշխան Աղփ Իղիթուէրը[10]): Վերջինս բանակցութիւնների յաջող աւարտից յետոյ վերադարձրեց Ջեւանշէրին 120 հազ. գլուխ ոչխար, 7 հազ. ձի ու ցուլ: Այնուհետեւ խաղաղութեան դաշինք կնքուեց, որն ամրագրուեց հոնաց թագաւորի դստեր ու աղուանից իշխանի անդրանիկ որդու ամուսնութեամբ[11]:

Մատենագիրը ոչինչ չի յայտնում այն պարտաւորութիւնների մասին, որոնք ստանձնեց Ջեւանշէրը: Եւ հենց դա մեզ յանգեցնում է այն եզրակացութեան, որ տուեալ պարտաւորութիւնները ինչ-որ կերպով չէին բխում աղուանից իշխանութեան գերագոյն շահերից: Չէ՞ որ այս իշխանի անանուն պատմիչը, ով նրա քաղաքական գործունէութեանը (եւ ոչ միայն քաղաքական), նուիրել է իր երկի մի շարք գլուխներ, չի թաքցնում իր մեծ համակրանքը նրա հանդէպ: Մենք կարծում ենք թէ Ջեւանշէրը պարտաւորուեց ճանաչել Աղփ Իղիթուէրի գերիշխանի գերագոյն իրաւունքները:

Հաստատուած խնամիական կապերն էլ, մեր խորին համոզմամբ, հենց դրա վառ վկայութիւնն են:

Խաղաղութիւնը հոները խախտեցին միայն Պարտաւում Ջեւանշէրի դաւադրաբար սպանութիւնից յետոյ: *684 Թուականի Պատմութիւն*ի հեղինակը, ով այս սպանութեանը նուիրել է իր երկի մի ամբողջ գլուխ՝ *«Մահ Աւրհասական Ջեւանշէրի Մեծի Իշխանին»* խորագրով[12], ով գրի է առել վիպերգական մի երգ, յօրինուած ոմն հռետորի կողմից՝ *«Ողբ Ի Մահն Ջեւանշէրի Մեծի Իշխանին»* վերնագրով[13], դարձեալ լռում է՝ չնշելով այս անգամ աղուանից իշխանի սպանութեան օրը: Փոխարէնը նա գրում է, որ սպանութիւնը տեղի ունեցաւ *«...իբրեւ անցանէին աւուրք խորշակայեղց տաւթանացն, ի ժամանել բարձրութեան տաւնին մեծի Նաւակատեաց խաչին,...»*[14]: Նա նշում է նաեւ, որ դա *«ի վաթսներորդ երկրորդ ամի հարաւայնոյ իշխանութեանն գոռոզին Մահմատայ»*[15], այսինքն՝ հիջրայի (681/2):

Քանի որ հիջրայի 682ը սկսուել է 681ի Սեպտեմբերի 20ին, ապա խօսքը 681ի Սեպտեմբերի մասին է, երբ աղուանից եկեղեցին հայոց եկեղեցու հետ մէկտեղ ամսի 15ին, 16ին, 20ին եւ 21ին մեծ ճոխութեամբ նշում էր Խաչվերացի տօնը[16]:

Պարտաւում Ջեւանշէրի սպանութիւնից անմիջապէս յետոյ նրա եղբօր որդի Վարազ Տրդատը ընտրուեց նոր իշխան: Լուրն առնելով հոնաց մեծ իշխանը, *684 Թուականի Պատմութիւն*ի հեղինակի վկայութեամբ, ներխուժեց Աղուանք մեծաթիւ զօրքով[17]: Ենթիմաստից էլ ուղղակիօրէն հետեւում է, որ Աղփ Իղիթուէրը իր խնամու սպանութեան դիմաց վրէժխնդիր էր ուզում լինել: Եւ ահա աղուանից նորընտիր կաթողիկոս Եղիազարը (681-687) ստիպուած էր ներկայանալ հոնաց իշխանի ճամբար ու արդարանալ նրա առջեւ առ այն, որ Վարազ Տրդատը իր հօրեղբօր սպանութեան հետ որեւէ առնչութիւն չունի, որ նա իշխանական գահին բռնութեամբ չի տիրել, այլ երկրի նախարարական ժողովի կողմից է օրինաւոր կերպով ընտրուել: Միայն դրանից յետոյ է որ Աղփ Իղիթուէրը թողնում է Աղուանից աշխարհը եւ վերադառնում Վարաջան/Վառաչան[18]:

Նմանատիպ ներխուժումներից ապագայում խուսափելու համար՝ Վարազ Տրդատը պատմական որոշում է ընդունում՝ դեսպանութիւն ուղարկել Աղփ Իղիթուէրի մօտ՝ Մեծ Կուէնից

եպիսկոպոս Իսրայէղի գլխաւորութեամբ[19]: Եւ պատահական չէ, որ այդպիսի կարեւոր առաքելութիւնից առաջ մենք գտնում ենք Իսրայէղին Վաղարշապատում՝ հայոց վեհափառ Սահակ Գ. Ձորափորեցու (677-704) եւ գահերէց իշխան Գրիգոր Մամիկոնեանի (662-685) պաշտօնական ընդունելութեան ժամանակ: *684 Թուականի Պատմութիւն*ում դէպի Հոնք դեսպանութեան նկարագրման նախորդող գլուխը ամբողջովին այդ ունկնդրութեան է նուիրուած[20]:

Հանդիպումները Վաղարշապատում պատահական չէին: Չնայած, դրանց օրակարգի ու բովանդակութեան վերաբերեալ ոչինչ չես գտնի անանուն մատենագրի մօտ, Իսրայէղը հայոց իշխանութեան մեծամեծների հետ անկասկած պէտք է որ քննարկէր իրեն վերապահուած քաղաքական ու կրօնական գործունէութիւնը հեթանոս Հոնքում: Բանն այն է, որ աղուանից հայրապետական աթոռը գտնւում էր կաթողիկոսանիստ Դուինի հովանու ներքոյ[21]:

*684 Թուականի Պատմութիւն*ի այլ հատուածում գտնում ենք ամբողջ մի գլուխ, որտեղ նկարագրուած է Իսրայէղ եպիսկոպոսի դժուարին ձմեռային ուղին դէպի Հոնաց Աշխարհ *«ի վաթսներորդ երկրորդ ամի հարաւայնոյ իշխանութեանն»* (հիջրայի), այսինքն՝ 681-682ի ձմռանը[22]: Դեսպանութիւնը ճանապարհ է ընկնում *«յամսեանն մեհեկանի, որ աւր ԺԸ էր ամսոյն»*, այսինքն՝ Դեկտեմբերի 23ին[23], եւ հասնում Վարաջան/Վառաչան *«ի մուտս Քառասներորդացն»*, այսինքն՝ Կիրակի օր, 682ի Փետրուարի 9ին[24]: Իսրայէղը արժանանում է հոնաց մեծ իշխանի ճոխ ընդունելութեանը[25]:

Անանուն մատենագիրը յաջորդ երկու գլուխներում մանրամասն, վաղ միջնադարում բնորոշ աւանդական ոճով, յաճախ առաջին դէմքից եւ յոգնակի թուով (ինչը թոյլ է տալիս ենթադրել, որ նա իր անմիջական մասնակցութիւնն է բերել տուեալ առաքելութիւնում), շարադրում է թէ ինչպէս հոները Իսրայէղի քարոզչութեան արդիւնքում աւերեցին իրենց հեթանոսական մեհեանները եւ ընդունեցին սուրբ մկրտութեան խորհուրդը: Աղփ Իղիթուէրը որոշեց նոյնիսկ քրիստոնէութիւնը Հոնաց Մեծ Իշխանութիւնում հռչակել որպէս միակ պետական կրօն, իսկ Իսրայէղին նա թոյլ տուեց արքունիքի դարպասների առջեւ սուրբ խաչ կանգնեցնել: Աղփ Իղիթուէրը օծուեց Իսրայէղի ձեռամբ Սուրբ Զատկի նաւակատեաց (ճրագալոյցի) օրը[26], որը 682ին նշւում էր Մարտի

29ին: Այսպիսով՝ մեր տրամադրութեան տակ ունենք Հոնաց Մեծ Իշխանութիւնում «հայոց քրիստոնէութեան» (որը «ուղափառութեան» տիրող մոդէլն էր ոչ միայն Հայքում, այլեւ յարակից Աղուանքում[27]), հեթանոսութեան դէմ յաղթանակի ճշգրիտ օրը: Այդ յաղթանակը հնարաւոր եղաւ հայ-աղուանական քաղաքական ու եկեղեցական առաքելութեան շնորհիւ:

Եւս մէկ յատուկ գլուխ մեր յուշարձանում նուիրուած է այն պատմական իրողութեանը, թէ ինչպէս հոնաց մեծ իշխանը որոշեց Իսրայէղին թողնել իր երկրում որպէս հոգեւոր առաջնորդ՝ հիմնելով Վարաջան/Վառաչանում հայրապետական աթոռ[28]: Ստացւում է, որ Աղփ Իղիթուէրը նպատակադրուել էր ձեւաւորել հոնաց «ազգային» եկեղեցի, սեփական հայրապետական աթոռով: Հաւանական է՝ նա մտադիր էր ի դէմս քրիստոնէութեան գաղափարական զէնք ձեռք բերել հեթանոսական Խազարիայի դէմ պայքարում, յանուն պետական անկախութեան[29]:

Իր նպատակը գործադրելու համար՝ Աղփ Իղիթուէրը Իսրայէղի հենց խորհրդով գրաւոր դիմում է աղուանից կաթողիկոս Եղիազարին եւ երկրի իշխան Վարազ Տրդատին խնդրանքով՝ նշանակել Իսրայէղին Հոնաց Մեծ իշխանութիւնում որպէս հովուապետ: Քիչ անց նմանատիպ ուղերձով նա դիմում է հայոց կաթողիկոս Սահակ Ձորափորեցուն եւ երկրի իշխան Գրիգոր Մամիկոնեանին, ինչը ոչ մի զարմանք չի առաջացնում:

Գրաւոր ուղերձները ամբողջովին մէջբերուած են *684 Թուականի Պատմութիւն*ում: Ահա, օրինակ, Աղփ Իղիթուէրի հայոց երկրի հոգեւոր ու աշխարհիկ առաջնորդներին հասցէագրուած թուղթը մեր կրճատումներով. *«Իսկ զեկեալ փրկութիւն աշխարհի վերինն Աստուած, յերկիր եկեալ Քրիստոս՝ ի լուր ականջաց լուաք իբրեւ ընդաղաւտ: Եւ յարշաւանաց մերոց յայդ աշխարհ եւ որ մաւտ առ մեաւք տունդ Աղուանից զմի հաւատ ունողք դուք եւ այժմ ամենայն տիեզերք, նախանձ բարի եւ մեր տնկեցաւ ի սրտի: ... Եւ այժմ զեղեալ առ մեզ սքանչելիս յեկելոցդ՝ լուեալ ձեր՝ եւ զհայցումն մեր կատարել ախորժեսջիք՝ զնոյնդ* (Իսրայէղդ - Ա.Շ.) *առաքեալ մեզ տեսուչ: Եւ ի սրբոյ հայրապետէդ Աղուանից Եղիազարու խնդրեալ է մեր, եւ զձեզ գործակից եւ հաւատակից նմա գիտելով աղերսեմք յերկաքանչիւրոցդ կատարել զմեր հոգեւոր խնդիր: Զի սակս նորա լինելոյ առ մեզ*

արշաւանք զաւրացս խուժադուժ ազգաց յաշխարհ ձեր արգելեալ փակեալ լինիցի՝ մեր մի հաւատ ունելով եւ ձեզ»[30]:

Պատասխան թղթում հայոց վեհափառն ու գահերէց իշխանը նշեցին, թէ իբր Իսրայէղը չէր կարող ընդմիշտ հեռանալ իր թեմից, որը Մեծ Կուէնք աղուանից գաւառում էր. *«Այլ զոր խնդրեցէք ի մենջ զեպիսկոպոսդ Իսրայէղ,*- գրում են նրանք Աղփ Իղիթուէրին,- *մեծ է այդ խորհուրդ ձեր, զի չէ մարթ հաւտի առանց հովուի լինել»*: Ապա նրանք դիւանագիտօրէն ելնում են դրու-թիւնից. *«Եւ արդ՝ ծանր եւ դժուարին է մեզ չկատարել զհայցումնդ ձեր, սակայն պատճառք կան. զի ոչ է նա վիճակեալ մերում աթոռոյս, այլ՝ տանն Աղուանից: Մեր կամ է եւ մեծ յաւժարութիւն՝ լինել նմա առ ձեզ հանապազ, այլ այդ հրաման եւ իշխանութիւն աթոռակցին մերոյ է՝ Եղիազարու՝ հայրապետին Աղուանից. նորա է գործդ այդ»*[31]:

Վերջինս, Վարազ Տրդատի հետ, ըստ երեւոյթին, հայկական կողմի ցուցմունքով, յայտնեց հոնաց սուրհանդակներին, որոնք շտապ հասան Աղուանից մայրաքաղաք Պարտաւ, առ այն որ Իսրայէղը կարող է նշանակուել Հոնաց Աշխարհում, ինչպէս իրենք են կարծում, միմիայն համատեղութեան կարգով. *«Ոչ է պարտ դմա,*- ասում են աղուանից կաթողիկոսն ու իշխանը,- *զհաւատացեալ դմա յԱստուածոյ զհաւտն իւր թողուլ միանգամայն եւ լինել ընդ ձեզ. այլ երթալ եւ գալ դմա ըստ կարի իւրում հրամայեմք...»*[32]:

Աղփ Իղիթուէրի նամագրութիւնը հայոց հոգեւոր ու աշխարհիկ առաջնորդների հետ վկայում է, որ այդ մակարդակի հարցերը, ինչպիսին էր նոր ինքնուրոյն եկեղեցական կազմակերպութեան ձեւաւորումը, աղուանից կաթողիկոսի ու իշխանի իրաւասութեան տակ չէին գտնւում: Հաւանական է, հենց այդ պատճառով է որ Խորհրդային Ադրբեջանում յայտնի ակադեմիկոս Զիա Բունիաթովը խուսափում էր խոստովանել, որ բացի Պարտաւ ուղարկուած թղթից Աղփ Իղիթուէրը խնդրանքով դիմել է նաեւ Հայոց երկրի առաջնորդներին[33], եւ դա այն դէպքում, երբ վերջինների հետ հոնաց մեծ իշխանի նամակագրական թղթերի պատճէները *684 Թուականի Պատմութիւն*ում երկու գլուխ են զբաղեցնում:

Հայոց կողմի պատասխան թղթի ենթիմաստից հետեւում է, որ կաթողիկոսանիստ Դուինը ակնյայտօրէն փորձում էր խափանել հոնաց ձեւաւորուող եկեղեցու հնարաւոր լիակատար անկախացումը: Հակառակ դէպքում՝ նա չէր խոչընդոտի, որ Իսրայէղը

Վարաջան/Վառաչանում նշանակուէր հովուապետ՝ մշտական հիմունքներով. նրա փոխարէն աղուանից Մեծ Կուէնք գաւառում մէկ այլ եպիսկոպոս նշանակելը այդքան էլ բարդ խնդիր չէր:

Հոնաց սուրհանդակներին պաշտօնական Պարտաւի պատասխանը չգոհացրեց, սակայն նրանք ստիպուած էին ընդունել առաջ քաշուած պայմանը: *«Ի գալն* (Իսրայէղի - Ա.Շ.) *եւ յերթալն առ մեզ մի յապաղեսցի եւ զեդեալ հիմն հաւատոյ անդրէն մի՛ քակտեսցի եւ թողցէ զմեզ որբս,...»*, յայտնեցին նրանք Վարաջան/Վառաչան վերադառնալուց առաջ[34]: Այս յայտարարութիւնները, ինչպէս շարունակում է մեր անանուն մատենագիրը, անտարբեր չթողեցին Իսրայէղին. նա շտապեց Հոնաց Աշխարհ[35]:

Հայքի ու Աղուանքի առաքելական գործունէութիւնը, որի միանշանակ նպատակն էր՝ քաղաքական ու հոգեւոր դաշինք հաստատել հիւսիսային վտանգաւոր այս հարեւանի հետ, չփոխեց աշխարհաքաղաքական իրավիճակը Մերձկասպեան Կովկասի տարածաշրջանում, քանզի հոները գտնւում էին խազարներից վասալական կախման մէջ: Վերջիններս էլ դարձեալ անցան Մեծ Կովկասի լեռնաշղթան հիւսիսից հարաւ:

Խազարների ու հոների 680ականներին կատարած ներխուժումների վերաբերեալ հետազօտողների շրջանում տարակարծութիւններ կան. հիմնականում հետեւելով ակադեմիկոս Սուրէն Երեմեանին, նրանք պնդում են, թէ տեղի է ունեցել միայն մէկ արշաւանք՝ 684ին, այդ իսկ պատճառով էլ Իսրայէղի գլխաւորութեամբ դեսպանութիւն ուղարկուեց Աղփ Իղիթուէրի մօտ[36]: Տարակարծութիւնների հիմնական պատճառը մատենագիրների ոչ-պարզորոշ տեղեկութիւններն են: Ահա՝ մեր հիմնական սկզբնաղբիւրի՝ *684 Թուականի Պատմութիւն*ի անանուն հեղինակը հոների դարձի ու այն նամակագրութեան մանրամասն եւ հետեւողական շարադրումից յետոյ կտրուկ վերջացնում է իր տարեգրութիւնը: Ղեւոնդ Վարդապետը վերոյիշեալ *«դադարեցին ի հարկատուութենէ Հայք, Վիրք Աղուանք, ծառայեալ նոցա* (Տաճկաց - Ա.Շ.) *ամս Լ: Եւ եղեն աւուրք ապստամբութեան նոցա ամք Գ,*- գրառումից յետոյ աւելացնում է՝- *Եւ ի չորրորդ ամին փիրեցին ի վերայ աշխարհիս Հայոց հիւսիսային ազգն, որ ասին Խազիրք, եւ սպանին ի պատերազմին զիշխանն Գրիգոր եւ զբազումս ի նախարարացն եւ զիշխանն Վրաց, եւ Աղուանից»*[37]: Ուշ խմբագրումներն էլ խա-

զարների այս ներխուժումը թուագրում են տարբեր կերպ: Օրինակ՝ Յովհաննէս Գ. Դրասխանակերտցի կաթողիկոսը (898-929) թուագրում է այն Սահագ Գ. Ձորափորեցու գահակալման Է. տարում (683/4)[38], իսկ Ասողիկը՝ հայոց 134 թուով (685/6)[39]:

Մինչ օրս հետազօտողները պատշաճ ուշադրութիւն չեն դարձրել Փիլոն Տիրակացու հաւանական վկայութեանը: Նրան վերագրուող *Ժամանակագրութիւն*ը աւարտւում է հետեւեալ տողերով. *«ԻԻՍՏԻԱՆՈՍ որդի երրորդ Կոստանդնի, ամբ Բ: Ի սորա առաջին ամին փիրեցին հիւսիսային ազգն, որ ասին Խազիրք՝ Հայոց, Վրաց եւ Աղուանից: Եւ սպանին ի պատերազմի զիշխանս Հայոց, Վրաց եւ Աղուանից, յամսեանն սահմի, որ աւր Ժ էր ամսոյն, ի ՃԼԴ թուականին Հայոց»*[40]: Այսպիսով, մեր տրամադրութեան տակ ունենք խազարների դէմ ճակատագրական ճակատամարտի եւ իշխանների մահուան ճշգրիտ օրը՝ 685ի Օգոստոսի 16ը:

Տարեթիւը լիովին համապատասխանում է ե՛ւ բիւզանդական կայսր Յուստինիանոս Բ.ի (685-695 եւ 705-711) գահակալման առաջին տարուան, ե՛ւ Ղեւոնդ Վարդապետի *Ժամանակագրութեան*ը (652ի Օգոստոսին կնքուած հայ-արաբական դաշինքի /30+4=/34րդ տարում), ե՛ւ Ասողիկի (հայոց 134):

Աւելին, իրաքցի պատմիչ Խալիֆա իբն Խայեաթի (776/4-854) մօտ պահպանուել է մի համառօտ, սակայն արժէքաւոր գրանշում թէ, որ հիջրայի 66ին, որի սկիզբը համապատասխանում էր 685ի Օգոստոսի 8ին, խազարների կողմից ալ-Մաուսիլում (Մոսուլում) սպանուեց արաբ կառավարիչը[41]: Ակնյայտ է, որ խազարների արշաւանքը այս անգամ հասել էր մինչեւ Վերին Միջագետք:

Եւ, այսպէս, Է. դարի երկու սկզբնաղբիւրների եւ դրանց Ը.-Ժ. դարերի խմբագրումների հաղորդագրութիւններից մեզ հասած նիւթերի ամփոփումը ցոյց տուեց, որ 680ականների սկզբներին տեղի է ունեցել հիւսիս-կովկասեան թիւրքախօս քոչուորների երկու արշաւանք: Եթէ 681ի Սեպտեմբերին նրանք ներխուժեցին Աղուանք, ապա երկրորդ անգամ՝ 685ի Օգոստոսին, կատարեցին մեծ արշաւանք ոչ միայն դէպի Աղուանք, այլեւ՝

Հայք ու Վիրք, սպանելով տեղի կառավարիչներին: Իրադարձութիւնների ընթացքը աւելի պարզ լուսաբանելու համար՝ այս երկու արշաւանքներից առաջինը առաջարկում ենք կոչել «փոքր»: Ակնյայտ է, որ մեծ արշաւանքի ժամանակ աւելի

շատ տուժեցին Հայքն ու Վիրքը: Ասողիկը, ով ներխուժման ճշգրիտ տարեթիւն էր պահպանել սերունդների համար, հաղորդում է, որ սպանուեցին միայն նշուած երկու իշխանութիւնների կառավարիչները: Իսկ ինչ վերաբերում է աղուանից եպիսկոպոս Իսրայէղի գլխաւորած դեսպանութեանը դէպի հոնաց մեծ իշխանութիւն, ապա այն կարող էր տեղի ունենալ միայն 681ի այդպէս կոչուած «փոքր արշաւանք»ից յետոյ: 685ի խոշոր արշաւանքից յետոյ, որին ենթարկուեցին Կովկասից հարաւ գտնուող քրիստոնեայ բոլոր երեք իշխանութիւնները, դեսպանութիւն կ'ուղարկուէր ո՛չ միայն Աղուանից կաթողիկոսի ու այդ երկրի իշխանի կողմից, եւ ո՛չ միայն դէպի հոնաց մեծ իշխանի արքունիք: Այնպէս որ Երեմեանի եւ այն հետազօտողների[42], եզրակացութիւնները, որտեղ տեղ է գտել 680ականների սկզբներին (հոների ու) խազարների կողմից կատարուած միայն մէկ արշաւանքի գաղափարը, անհիմն են մեզ թւում: Բացի այդ, երկրորդ արշաւանքը հարկաւոր է թուագրել ոչ թէ 684ով, ինչպէս որ մինչ օրս առաջարկւում էր անել, այլ՝ 685ի Օգոստոս ամսով:

Երկրորդ ներխուժման պատճառ կարող էր հանդիսանալ խազարական աւագանու թշնամական վերաբերմունքը՝ հեթանոս խաքանութիւնից վասալական կախման մէջ գտնուող Հոնաց Մեծ Իշխանութիւնում քրիստոնէութեան տարածման ու հաստատման հայ-աղուանից առաքելութեան գործընթացին: Բանն այն է, որ միաստուածեան կրօնի ընդունումը, ինչպէս արդէն նշեցինք, թոյլ կը տար ինքնավար հոնաց իշխանութեանը ձեռք բերել լիակատար պետական անկախութիւն: Եւ, հաւանական է, Աղփ Իղիթուէրը հասցրեց մինչեւ 685ի օգոստոսեան արշաւանքի սկիզբը հիմնադրել Վարաջան/Վառաչանում հայրապետական աթոռ Իսրայէղի գլխաւորութեամբ, եւ քրիստոնէութեան գաղափարախօսական դրօշի ներքոյ սկսել իր թեժ պայքարը յանուն ինքնիշխանութեան: Միայն մեր այսպիսի ենթադրութիւնները կարող են բացատրել աղբիւրներում բացակայող այն փաստը, որ այս 685ի խոշոր արշաւանքը նոյնպէս գլխաւորում էր Աղփ Իղիթուէրը, եւ, որ ընդհանրապէս այն կատարեցին հոները. ամէնուրեք խօսքը գնում է միայն ու միայն խազարների մասին: Հետեւաբար, սա խազարաց խաքանի պատժիչ արշաւանք էր ընդդէմ իր հոնաց վասալի եւ վերջինիս քաղաքական ու հոգեւոր դաշնակիցների՝ ի դէմս Աղուանքի ու Հայքի իշխանների:

Հնազանդեցուած հոները պէտք է որ վերադառնային հեթանոսութեան եւ աջակցէին զօրքով խազարաց գերիշխանին՝ արշաւելու Աղուանք, Հայք եւ Վիրք:

Այսպիսով, հայ-աղուանական քաղաքական ու կրօնական առաքելութեան յաղթանակը, որի հետեւանքն էր Հոնաց Մեծ Իշխանութիւնում «հայոց քրիստոնէութիւն»ը որպէս պետական կրօն հռչակելը, տեւեց շատ կարճ: 682ի Մարտի 29ից մինչեւ 685ի Օգոստոսի սկիզբը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Մանրամասն տե՛ս՝ Arsen Shahinyan, *Armeniya I Strani Yujnogo Kavkaza V Usloviyakh Vizantiysko-Iranskoy I Arabskoy Vlasti,* seria "Vizantiyskaya biblioteka. Issledovaniya" (Հայաստանը եւ Հարաւային Կովկասի երկրները բիւզանդա-իրանական ու արաբական իշխանութեան պայմաններում, «Բիւզանդական Գրադարան Մատենաշար: Ուսումնասիրութիւններ»), Սանկտ Պետերբուրգ, «Ալետէյա», 2011, էջ 112-117:

[2] «Փիլոն Տիրակացի, Ժամանակագրութիւն», *Մատենագիրք Հայոց, Հտր. Ե. (Է. Դար)*, Անթիլիաս, Տպարան Մեծի Տանն Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութեան, Լիբանան, 2005, էջ 969:

[3] «Պատմաբանութիւն Ղեւոնդեայ Մեծի Վարդապետի Հայոց», *Մատենագիրք Հայոց, Հտր. Զ. (Ը. Դար)*, Անթիլիաս, Տպարան Մեծի Տանն Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութեան, Լիբանան, 2007, էջ 743-744:

[4] Տե՛ս, օրինակ՝ Suren Eremyan, «Moisey Kalankatujskiy O Posolstve Albanskogo Knyazya Varaz-Trdata K Xazarskomu Xakanu Alp-Ilitveru» (Մովսէս Կաղանկատուացին խազարաց խաքանի մօտ աղուանից իշխան Վարազ Տրդատի դեսպանութեան մասին), *Zapiski Instituta Vostokovedeniya Akademii Nauk,* 1939, Հտր. 7, էջ 135-136. նաեւ՝ Kamila Trever, *Ocherki Po Istorii I Kulture Kavkazskoy Albanii. IV v. do n.e. - VII v. n.e.* (Դրուագներ Կովկասեան Աղուանքի պատմութեան ու մշակոյթի. Դ. դար Ք.ա.-Է. դար Ք.Ե.), Մոսկուա-Լենինգրադ, ՍՍՌՄ ԳԱ, 1959, էջ 249. նաեւ՝ Aram Ter-Ghevondyan, *Armeniya I Arabskiy Xalifat* (Հայաստանը եւ Արաբական Խալիֆայութիւնը), Երեւան, ՀՍՍՀ ԳԱ, 1977, էջ 50. նաեւ՝ *Nina Garsoïan*, "The Arab Invasions and the Rise of the Bagratuni (640-884)," *The Armenian People from Ancient to Modern Times,* ed. by R. Hovannisian, 1-2, New York, St. Martin's Press, Հտր. 1, 1997, էջ 123:

[5] كتاب فتوح البلدان تاليف الإمام أحمد بن يحيى بن جابر البلاذريّ — Liber expugnationis regionum auctore Imamo Ahmed ibn Jahja ibn Djabir al-Beladsori, ed. M. de Goeje, Lugduni Batavorum, Brill, 1866, էջ 205: Քաղաքացիական այս պատերազմի մասին տե՛ս՝ Գէորգ Աստարճեան, *Ընդարձակ, Ընդհանուր Արաբական Պատմութիւն (2500 Ն.Ք.-1918)*, Պէյրութ, Տպ. Սեւան, 1961, էջ 177-178:

[6] تاريخ أحمد بن أبى يعقوب بن جعفر بن وهب إبن واضح الكاتب العبّاسىّ المعروف باليعقوبىّ — *Ibn Wadhih qui dicitur al-Ja'qubi,* Historiae, ed. M. Houtsma, 1-2, Lugduni Batavorum, Brill, 1883, Հտր. 2, էջ 277–278:

[7] Համառօտ խմբագրութիւնում՝ Վառաչան («Աշխարհացոյց», *Մատենագիրք Հայոց, Հտր. Բ. (Ե. Դար)*, Անթիլիաս, Տպարան Մեծի Տանն Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութեան, Լիբանան, 2003, էջ 2170):

[8] Նոյն տեղում, էջ 2150:

[9] «Անանուն, 684 Թուականի Պատմութիւն», *Մատենագիրք Հայոց, Հտր. Ե. (Է. Դար)*, Անթիլիաս, Տպարան Մեծի Տանն Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութեան, Լիբանան, 2005, էջ 825-827:

[10] Հոնաց այս մեծ իշխանի անունը յիշատակւում է սկզբնաղբիւրում երկու անգամ, երկուսն էլ յաջորդ գլուխներում:

[11] «Անանուն, 684 Թուականի Պատմութիւն», էջ 827:

[12] Նոյն, էջ 855-859:

[13] Նոյն, էջ 859-861:

[14] Նոյն, էջ 856:

[15] Նոյն, էջ 868: Անտեսելով հիջրայով թուագրուող Ջեւանշէրի մահը՝ ոմանք այս սպանութիւնը թուագրել են 669 (տե՛ս, օրինակ՝ Eremyan, յաւելուած, էջ 155. նաեւ՝ Trever, էջ 249. նաեւ՝ Mikhail Artamonov, *Istoriya Xazar* (Խազարների պատմութիւն), Լենինգրադ, Պետական Էրմիտաժ, 1962, էջ 186), միւսները՝ 670ով (տե՛ս, օրինակ՝ Anatoliy Novoseltsev, *Xazarskoe Gosudarstvo I Ego Rol V Istorii Vostočnoy Evropiy I Kavkaza* (Խազարական պետութիւնը եւ նրա դերը Արեւելեան Եւրոպայի ու Կովկասի պատմութիւնում), Մոսկուա, «Նաուկա», 1990, էջ 175):

[16] Հայ Առաքելական Եկեղեցին տարուայ տաղաւար տօներից այս հինգերորդն ու վերջինը նշում է Կիրակի օրը, Սեպտեմբերի 11-17ն ընկած ժամանակահատուածում, ինչպէս նաեւ յաջորդ շաբաթուայ Երկուշաբթի, Ուրբաթ եւ Շաբաթ օրերին: Մեր հաշուարկով, 681ին Կիրակի օր էր նշուած ժամանակահատուածում Սեպտեմբերի 15ը, իսկ յաջորդ շաբաթուայ Երկուշաբթի օրն էր ամսի 16ը, Ուրբաթ ու Շաբաթ օրերն էին ամսի 20ն ու 21ը, համապատասխանաբար:

[17] «Անանուն, 684 Թուականի Պատմութիւն», էջ 861-863:

[18] Նոյն, էջ 863-864:

[19] Նոյն, էջ 868-871:

[20] Նոյն, էջ 866-868:

[21] Դրա մասին մանրամասն տե՛ս՝ Shahinyan, էջ 184-199:

[22] Տե՛ս՝ «Անանուն, 684 Թուականի Պատմութիւն», էջ 868-871: Երեմեանը, հիմնականում հիմք ընդունելով աւելի ուշ հայ մատենագիրների տեղեկութիւնները, իր յօդուածում այս դեպպանութիւնը թուագրում է 684-685 ձմռանը (Eremyan, էջ 134-137):

[23] Հիջրայի 62ը (=681ի Սեպտեմբերի 20 – 682ի Սեպտեմբերի 9ը) մօտաւորապէս համապատասխանում է հայոց 130ին (=681ի Յունիսի 8 – 682ի Յունիսի 7ը), իսկ նրա Մեհեկան ամսուայ 18ը՝ 681ի Դեկտեմբերի 23ին: Տարեթիւը հայոց տոմարով պահպանուել է ԺԱ. դարի սահմանագլխի պատմիչ Ասողիկի մօտ

(Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ, «Պատմութիւն Տիեզերական», *Մատենագիրք Հայոց, Հտր. ԺԵ. (Ժ. Դար, Պատմագրութիւն Երկու Հատորով, Գիրք Բ)*, Անթիլիաս, Տպարան Մեծի Տանն Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութեան, Լիբանան, 2012, էջ 702): Երեմեանը այս 130ը, միւս խմբագրումների մօտ տեղ գտած ժամանակագրութիւնների հետ համատեղելու համար, ուղղակի առաջարկել է փոխարինել այն հայոց 133ով (684/5):

[24] Մեր հաշուարկով՝ 682ին Քառասնորդական կամ Մեծի Պահոց շրջանը սկսուեց Փետրուարի 10ին, իսկ Սուրբ Հատկի տօնը նշուեց՝ Մարտի 30ին:

[25] «Անանուն, 684 Թուականի Պատմութիւն», էջ 870: Երեմեանի որոշմամբ՝ Իսրայէղի երթուղին ձգուեց Քարթլիի (Վիրքի) տարածքով (Eremyan, էջ 137-150):

[26] «Անանուն, 684 Թուականի Պատմութիւն», էջ 871-888:

[27] «Ուղափառութեան» հայոց մոդէլը հիմնականում կայանում է առաջին երեք տիեզերական ժողովների ընդունման եւ չորրորդ, Քաղկեդոնում 451ին հրաւիրուած, տիեզերական ժողովի մերժման դիրքորոշումից:

[28] «Անանուն, 684 Թուականի Պատմութիւն», էջ 888-891:

[29] Նման գաղափար առաջին անգամ արտայայտել է դեռ ռուս յայտնի գիտնական Անատոլիյ Նովոսելցեւը (տե՛ս՝ Novoseltsev, էջ 147):

[30] «Անանուն, 684 Թուականի Պատմութիւն», էջ 892:

[31] Նոյն, էջ 893-894:

[32] Նոյն, էջ 894: Հաւանական է, այդպիսի ընթացակարգ կիրառուել է աւելի վաղ: Դասխուրանցու եռահատոր *Պատմութիւն Աղուանից Աշխարհի*ի երրորդ հատորի վերջին ԻԴ. գլխում՝ *«Անուանք Հայրապետացն Աղուանից, Ամբ եւ Գործք Նոցին»* խորագրով, կարելի գտնել մի գրանշում առ այն, որ Աղուանից 11րդ եպիսկոպոսն էր (Զ. դարի սկիզբ) *«սուրբն Յովհան, որ եւ Հոնացն եղեւ եպիսկոպոս փէր հայրապետական շնորհիւ, զորպէսն չգիտէմք»* (տե՛ս՝ «Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի», *Մատենագիրք Հայոց, Հտր. ԺԵ. (Ժ. Դար, Պատմագրութիւն Երկու Հատորով, Գիրք Բ)*, Անթիլիաս, Տպարան Մեծի Տանն Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութեան, Լիբանան, 2012, էջ 421):

[33] Zia Buniyatov, *Azerbajžan v VII–IX vv. (Ադրբեջանը Է.-Թ. դդ.)*, Բաքու, Ադրբեջանական ՍՍՀ ԳԱ, 1965, էջ 103-104:

[34] «Անանուն, 684 Թուականի Պատմութիւն», էջ 894:

[35] Նոյն, էջ 894-895:

[36] Eremyan, էջ 129–155. նաեւ՝ Trever, էջ 249-250. նաեւ՝ Ստեփան Մելիք-Բախշեան, *Հայաստանը VII–IX Դարերում*, Երեւան, «Միտք», 1968, էջ 91-92. նաեւ՝ Ter-Ghevondyan, էջ 50-51. նաեւ՝ Garsoïan, *The Arab Invasions and the Rise of the Bagratuni (640-884)*, էջ 123: Մեր օրերի խոշոր ռուս արաբագէտ Օլէգ Բոլշակովը գրում է միայն 681ի ներխուժման մասին (տե՛ս՝ Oleg Bolshakov, *Istoriya Xalifata*, *Հտր.* Գ. Մոսկուա, Ռուսաստանի ԳԱ «Վոստոչնայա Լիտերատուրա», 1998, էջ 214): Խորհրդային պատմագրութիւնում երկու արշաւանքների վերաբերեալ գրանշումներ նոյնպէս եղել են (տե՛ս, օրինակ՝

Artamonov, էջ 186, 190. նաեւ՝ Buniyatov, էջ 102, 104. նաեւ՝ Novoseltsev, էջ 175–176):

[37] *Ղեւոնդ*, էջ 744:

[38] Յովհաննէս Դրասխանակերտցի, «Պատմութիւն Հայոց», *Մատենագիրք Հայոց, Հտր. ԺԱ. (Ժ. Դար, Պատմագրութիւն)*, Անթիլիաս, Տպարան Մեծի Տանն Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութեան, Լիբանան, 2010, էջ 414-415:

[39] *Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ*, էջ 702:

[40] *Փիլոն Տիրակացի*, էջ 969:

[41] تاريخ خليفة بن خيّاط \ حققه وقدّم له اكرم ضياء العمرى — The History of Khalifah ibn Khayyat, ed. by Akram Diya' al-Umari, Nagav, [S.I.], 1386–1387 A.H. / 1967 A.D., p. 260:

[42] Տե՛ս՝ ծանօթ. 37:

THE ARMENIAN-ALBANIAN POLITICAL AND RELIGIOUS MISSION TO THE NORTH-EASTERN CAUCASUS AND THE DATE OF THE HUNS' CONVERSION

(Summary)

ARSEN K. SHAHINYAN
a.shaginyan@spbu.ru

Through extensive and diverse sources, the author establishes the exact date of the 'victory' (29 March 682) of "Armenian Christianity" (the dominant model of "orthodoxy" not only in Armenia, but also in neighboring Caucasian Albania) over paganism in the Grand Principality of the Huns.

The author also establishes the time (early August 685) the Northern Caucasus Huns returned to paganism following the punitive expedition of the suzerain Khazars against the Albanian and Armenian principalities.

N.E. The article was made possible through Saint Petersburg State University research grant 5.38.283.2014.